

ու ծաղկեց մեր ազգային առանձնայատուկութիւններէն մեծն ու գեղեցիկը լեզուն: Ընդհակառակը հայ գիրքը V դդ. դարբնի յետոյ երբէք չդարձաւ ամենքի սեփականութիւն, այլ միայն հոգևոր դասն էր. որ վերապահեց իրեն այդ ասուածային մեծ շնորհը միշտ հետո հասարակութեան ստորին խաւերէն: Հայ շինականը մինչև օրս էլ իր բազմաթիւ սովորութիւններով և սպորտներով մնաց յոյնը, ինչ որ նախասարգի և Աշտիշատի ոսկեծոյլ վահագնի խաղերի միջոցին: Հայ գիրքը ընդհանրացաւ, դարձաւ բոլորի սեփականութիւն միայն այն ժամանակ, երբ գտնուեց սպազբուքեան գիւտը. ահա թէ իւրումն է այդ երկու տօների առանձնայատուկ տարբերութիւնը և մեծութիւնը — առաջինը գիրքն սեղծեց, իսկ միւսը ընդհանրացրեց: Սխալ էր նաև այն կարծիքը, թէ մեր պատմիչները տառերի գիւտից յետոյ սկսեցին իրենց գրածքներում պաշտպանել հայ աշխատաւոր գիւղացու դասը:

Տպագրութեան պատմութիւնն անելիս յարգելի դասախօսը կանգ առնելով Աթէնքի, Նոր-Ջուղայի և այլ աննշան վայրերի վրայ իբրև տպագրութեան կենտրոնների մի խօսք անգամ չսասց թէ էջմիածինն և Երեսասղէմը ևս եղել են իբրև այգիլտներ:

Դասախօսը խօսում էր ոչ այնքան սահուն և խառը ուստահայ և տաճկահայ բարբառներով:

Դասախօսութիւնից վերջը եղաւ մտքերի փոխանակութիւն, թէ ինչպէս պէտք է տօնել, ինչով յաւերժացնել և Երբ տօնել: Ժողովը իր ցանկութիւնն յայտնեց, որ ժամանակի առթիւ յառաջ եկած թիւրիմացութիւնը վերանայ և համազգային անմահ տօնը կատարել ամենուրեք մի օրում:

Անւանի վիպասան պ. Շիրվանդաղէն այդ խնդրի առթիւ խիստ զշացած խօսեց և ցաւակցո թիւն յայտնեց. որ ժողովրդից ընտրած և այդ տօնի նախաձեռնող Թիֆլիզի Երեսնական Եւ ձեռն գովի սրբոյ մեհրին դէմ է գնում էջմիածնի Եւ ձեռն ժողովը, թէ և այն կազմել է աւելի ուշ, քան Թիֆլիզինը: Ինչ վերաբերում է յաւերժացմանը ժողովականների մեծագոյն մասի ցանկութիւնն էր, գրական: Չձգի հիմն սրկումը. որով այդ երկու տօների պատմութեան մէջ կը լուսավորուի մի փառաւոր էջ:

Աւ—Նալ

Գիւլջան.

**ԺՈՂՈՎՆԵՐ ԵՒ ԴԱՍԱԽՕՍՈՒԹ.**

ՀԱՅ ԳՐԲԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԷԱՆ ՄԱՍԻՆ

Երկուշաբթի յուլիսի 16 ին յայտարարւած էր, որ հայ տպագրութեան 100-ամեակի և տառերի գիւտի 1500-ամեակի նշանակութեան մասին պիտի բանախօսեն Շիրվանդաղէ և Գր. Վարդանեան: Դասախօսութիւնից առաջ պ. Շիրվանդաղէն ծանօթացրեց ներկայ եղողներին Գր. Վարդանեանին և Դասախօսութիւնը ղեկավարելու համար առաջարկեց ընտրել նախագահ խաստարան Պարոնեանին, որ և անցաւ, իսկ ինքը առանց մի խօսք արտասանելու այդ երկու մեծ տօների նշանակութեան մասին, հակառակ յայտարարութեան, հեռացաւ բեմից:

Գալով դասախօսութեանը պէտք է սահնք, որ յարգելի դասախօսը իր նպատակին չկարողացաւ հասնել, այն է նա համարեա չխօսեց հայ մտքի այդ երկու գերագոյն տօների նշանակութեան մասին, այլ գլխաւորապէս կանգ առաւ Հայաստանի աշխարհագրութեան, պատմութեան և մի փոքր էլ տպագրութեան պատմութեան վրայ: Բոլորովին անտեղի էր հայ գրքի նշանակութեան մասին խօսելիս պատմել թէ որտեղ էր հայերի նախնական հայրենիքը, թէ ովքեր էին խալիզերը, նրանց 6 թագաւորութիւնները և այլ, որոնք էսպէս ոչ մի կապ չունէին բուն նիւթի հետ: Բացի այդ, յարգելի դասախօսը կանգ առաւ Արտաշիրեան հարստութեան, Տիգրան Մեծի, Արշակունիների պատմութեան վրայ քան հարկաւոր էր: Պարոնք չկարողացաւ քրիստոնէութեան մուտքը և տառերի գիւտը կապել օրգանապէս. նա ամենեին չխօսեց այն հասարակական, քաղաքական պայմանների մասին, որոնք առաջ քաշեցին և նպատաւոր հող դարձան այդ անմահ տօնի երեան գալուն: Բացի այդ դասախօսը թոյլ տուց իրան մի երկու անյայտարի սխալներ, ինչպէս օրինակ նա ասաց, թէ տառերի գիւտով հայ գիրքը գառաւ բոլորի սեփականութիւն և ամենքն սկսեցին հայ լեզուով կարդալ գրել. կարծում ենք այդ այդպէս չէ, որովհետև տառերի գիւտը ընդհանրացնող բնոյթ չունեցաւ, այլ նա գլխաւորապէս եղաւ այն աւագանը, որի մէջ փրկեց մեր հոգու ինքնուրոյնութիւնը և որի միջոցաւ պահպանեցաւ